ԼՂԻՄ. ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է

Հոկտեմբերի 10-ի առավոտը արցախցիներին դիմավորեց անամպ, արևոտ եղանակով։ Սակայն դրանից մարդկանց տրամադրությունը բնավ էլ չլավացավ։ Երբ ավելի քան մեկուկես տարի անընդհատ «Պրավդայում» և «Իզվեստիայում» տպագրվող հորինվածքներով ձըգտում են ղարաբաղցիներին համոզել, թե իրենց հայրենակիցների հանրապետության կազմում ապրելը նացիոնալիզմի դրսևորում է, իսկ Ադրբեջանի բեղադրանքի տակ ապրելը իսկական ինտերնացիոնալիզմ, բնությամբ հմայվելու տրամադրություն չի մնում, մանավանդ, որ ներկայումս նրանց կյանքը ամեն պահի վտանգի է ենթարկվում։

Վերջին ժամանակներս ինքնավար մարզի ներքին գործերի վարչության օպերատիվ ամփոփագրերը լավատեսություն չեն ներշնչում։ Անպատասխանատու անձանց կողմից ձեռնարկվող հակաիրավական և հանցավոր գործողությունների դեպքերը, որպես կանոն, այնպիսի լուրերի տեղիք են տալիս, որոնք էլ ավելի են շիկացնում ռեգիոնի առանց այն էլ լարված մթնոլորտը։ Դրանք կասեցնել, դժբախտաբար, առայժմ չի հաջողվում։ Այսպես, հոկտեմբերի 9-ին ժամը 22-ն անց 15 րոպեին Հադրութի շրջանի Հախուլլու գյուղի բնակիչ մի խումբ ադրբեջանցիներ, որսորդական հրացաններով զինված, հարձակվում են գործել այդ նույն շրջանի Էդիլլու հայկական գյուղի վրա։ Տեղի է ունեցել փոխհրաձգություն։ Տուժածներ չկան։

Ադրբեջանական ԽՍՀ ներքին գործերի մինիստրությունից գործուղված միլիցիայի աշխատակիցները նույն օրը ժամը 13-անց 15 րոպեին Մարտունու շրջանի Խոջավենդ գյուղի բնակիչ Միլիք Ուարզալիևի բակից գնդակոծել են Ճարտար գյուղի «Կոմունիզմ» կոլտնտեսության կաքնապրանքային ֆերման։ Տուժածներ չկան։

Հոկտեմբերի 9-ին մոտավորապես ժամը 17-անց 20 րոպեին Շուշիի շրջանի Կանաչքալա բնակավայրում գտել են Լաչինի շրջանի բնակիչ Ռզա Ջալալ օղլի Սադիխովի դիակը՝ սպանության նշաններով։

Բոլոր փաստերի առթիվ հետաքննություն է կատարվում։

Չի բարելավվում մարզի նաև տնտեսական դրությունը, որը անբուժելի դժվարությունների է հանդիպում պարենամթերքի և վառելիքի հարցում։ Գյուղում ցանքի կամպանիան ձգձգվում է։ Գյուղատնտեսության արտադրանքը վաճառասեղաններ չի հասնում։

Այսպիսին է Լեռնային Ղարաբաղի այսօրվա օրը։ Իսկ ի՞նչ ինֆորմացիա կստացվի վաղը...

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ